

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԶԸ.
Վերականգնող Կ. Պոլսոյ համար 10 ՄԶԸ.
Վերականգնող Կ. Պոլսոյ համար 5 ՄԶԸ.
Մանկական տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :



ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՅՈՒՆՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լէվոն շէրըմ լրագիրը միշտ կը
պնդէ թէ զինադադարն և հաշտու-
թեան նախապայմանները կըրուած
են, զորս տասն կէտի մէջ կամիտիւ-
բայ տակաւին չդիտողներ թէ արդ-
եօք հաշտութիւնն իրօք կըրուած է,
մանաւանդ որ Ռուսը իրենց յառաջ-
խաղացութիւնը մինչև երէկ դադ-
րեցուցած չէին : Իսկ թուրք լրագ-
րէնքն մին կըսէր թէ անցեալ հինգ-
շաբթի օրը Բ. Դուռը նոր հրահանգ-
ըրկած էր երեսօրեանայ, բայց տա-
կաւին բանակցութեանց ո՛ր միայն
վրայ լուր առնուած չէր, և հաշտու-
թեան յոյսերը կը տկարանային, եր-
կուշաբթի օրն Օսմանեան լիազոր ե-
րեսօրեաններէն բնաւ լուր չառնը-
ւեցաւ, քանզի հեռագիրը վիճեցնայի
ճանապարհով չորս օրէն հաղիւ մայրաքա-
ղաք կը հասնին և այս պատճառաւ
կուշանան : Մեծ դուռն և Օսման-
եան երեսօրեանք այժմ Ալեքիանու-
պօլիս կը գտնուէին : Մէկ երկու օ-
րէն թերևս աւելի ստոյգ և վաւերա-
կան տեղեկութիւններ հրատարակ-
ուին, առ այժմ այսչափ միայն կըր-
նանք ըսել թէ, ըստ մեզ՝ հաշտու-
թեան հասանակնութիւններն աւե-
լի զօրաւոր են, քանզի արտաքին
օգնութեան յոյսերը դրեթէ բոլոր-
վին ոչնչացած են, իսկ ներքին զօ-
րութեան գալով, ինչպէս Միտհաթ
փաշան ալ Լորտ Պիքոնֆիլտի հետ
տեսակցութեան ժամանակ ըսած է,
Բ. Դուռը Շիքքայի պարտութենէն
ետեւ ո՛չ ևս կարող է դիմադրել :

Անգղիոյ երևմտիկ նախարար Սըր
Սթաֆորտ Եօրթթօթ երկուշաբթի
իրիկուն երեսօրեանայ ժողովին ներ-
կայեց պատերազմական և ծովային
ժախտեց վրայ 6 միլիոն լիւրա աւելցնե-
լու ծրագիրն, և յարեց թէ այս աւելի
զօրութիւնն առայժմ դործածելու դի-
տում չկայ, բայց եթէ ժողովն այս
գումարը ընտարկէ, վստահութեան
ընդմէջ մը առած կըլլայ կառավարու-
թեան, որով Անգլիա աւելի զօրաւոր
դիրք մը կունենայ Եւրոպական դե-
պանախորհրդի մը մէջ : Սըր Սթա-
ֆորթ Եօրթթօթ ըսաւ թէ Անգլիա
պահանջած էր, որ եթէ կարելի է
ձուլաւոր կէշիպօլուի և Կ. Պոլսոյ վրայ
չքայէ : Ռուսիա պատասխանած էր
թէ հաւանութիւն կուտայ այնպէս
ընելու՝ եթէ Օսմանեան դիմադրու-
թիւնը չպարտաւորէ զինք ուրիշ կերպ
շարժել, և յուսացած էր թէ Անգ-
ղիա ալ կէշիպօլուն չպիտի դրաւէ :
Անգղիա պատասխանեց թէ այն-
պիսի միտք մը չունի : Սըր Սթաֆորտ
Եօրթթօթ ծանոցեց նաեւ թէ Ռուսիոյ
պատասխանն Անգլիոյ կառավարու-

թեան բանաւոր կերակի : « Անգղիոյ
պարտքն է, ըսաւ, բնաւ այնպիսի
բան մը չընել, որով թուրքիւս Անգ-
ղիայէն օգնութիւն գտնելու յուսով
քաջալերի՝ երբ Ռուսը Կ. Պոլիս հա-
նին : Անգղիոյ կառավարութիւնը
պատրաստուած չէ և միտք չունի,
ըսաւ, այնպիսի օգնութիւն մը տա-
լու : Իւր միակ նպատակն և բազ-
մանքն է ապագայ դժուարութեանց
տեղի չտալ, որք կրնան ծագիլ դե-
պանախորհրդին մէջ՝ եթէ Ռուսիա
Կ. Պոլսը դրաւէ : Սըր Սթաֆորտ
ըսաւ նաեւ թէ Անգլիական նաւատոր-
մին Օսմանեան ջուրերն յղումը կենաց
և ընդից տպահովութիւնը պաշտպա-
նելու համար է խաղաղութեանց ժա-
մանակ :

Երեսօր. ժողովը 6 միլիոն լիւրայի
պատերազմական նոր ծախսեց առա-
ջարկութեան վրայ վիճաբանութիւնն
ետ ձգեց : Կասկած կար որ կուսակ-
ցութեանց մէջ կազ պիտի ծագէր :
Լորտերուն խորհրդարանին մէջ
Լորտ Սթաֆորթն — Գանպլէ առա-
ջարկեց որ Անգլիա Կ. Պոլսը դրա-
ւէ : Լորտ Տէրպի մերժեց այս առա-
ջարկութիւնն իբրեւ չեղբորութեան
բռնաբարութիւն, և ըսաւ թէ իւր
պաշտօնէն հրաժարական տուած էր
Անգլիական նաւատորմին Գարդանե-
լի ներդուցն անցնելու հրաման զրկը-
ւելուն պատճառաւ : Լորտ Տէրպի
հաշտութեան պայմանաց վրայ վիճա-
բանել չուզեց, քանզի անոնց նկատ-
մամբ կատարեալ տեղեկութիւն չը
կար : Ժողովը Լորտ Սթաֆորթնի
Կ. Պոլսը դրաւելու առաջարկը մեր-
ժեց :

Սերվիլայիք իրենց գրաւած եր-
կրներուն սեփականութիւնն ապա-
հովելու մեծ ջանք կընեն : Նիշի գա-
ւառին մէջ Սերվիլական վարչութիւն
հաստատած են : Բիրօթի Եօրթթ
կոպոն իւր կրօնակից քրիստոնէից
ծանուցեր է թէ այսուհետեւ եկե-
ղեցւոյ մէջ յատուկ աղօթք պիտի
կարգային իրենց նոր վեհապետին՝
Միլան Օպրէնովիչ Գ. Ի համար : Այս
եպիսկոպոսը Ֆէնէրի Յուսայ պատ-
րարքարանին իրաւասութեան ներ-
քեւ է, և իւր ազատ կամքով չէ շար-
ժեր, այլ կը կարծուի որ իրեն պաշ-
տօնապէս տրուած հրամանաց հնա-
զանքած ըլլայ : Սակայն Բիրօթի (Շէ-
հըր — Գէօ) Պուլլարները Սերվիլական
վարչութիւնն ընդունելու տրամադ-
րութիւն չէին ցուցներ, երկրին նոր
տէրերը՝ Սերվիլայիք՝ դիտաւորու-
թիւն կը ցուցնէին Պուլլարներն իրենց
նմանցնելու և որչափ կարելի է աւե-
լի հող գրաւելու : Իսկ Պուլլարք քա-
նի մը պայմաններով Օսմանեան տի-
րապետութիւնը Սերվիլացւոյ իշխա-
նութիւնէն նախամեծար կը համարէ-
ին : Պուլլարաց լրագրերը տարիներէ

՚ի վեր համասերպութեան դէմ կը
մաքառէին, և Պուլլար դաստիարակ-
ներն ալ Սերվիլացւոյ դիտաւորները
Պուլլարաց աղբութեան քնասակար
կը համարէին :

Աթէնքի մէջ նոր նախարարու-
թեան կազմութենէն ՚ի վեր յուզմուն-
քը վերջացած չէր : Կըսուէր թէ քա-
նի մը հարիւր ապստամբք վճռի
կողմն ելեր են, և Լարիսայէն ալ ութ
հարիւր Օսմանեան զօրք ճանաչեց երա-
ն զանոնք ցրուելու համար : Կիրի-
տի մէջ դործերը խառնաշփոթ վիճա-
կի մէջ են, և կը վախցուի որ Բ. Դը-
րան մասնաւոր պաշտօնով զրկած Սա-
լիմ էֆէնդիին և Բօսթաքի պէյի ջան-
քերն ՚ի դերեւ չենեն : Կրեւաքուց
ժողովը Բարթէնիս Բէլայիտի անուն
վանական մը Ռուսիա զրկեր է, որպէս զի
Ռուսաց յաղթութեանց վրայ խնդակ-
ցութեան ուղերձ մը ներկայէ : Ռու-
զերձը կը խնդրէ Զարէն որ հաշտու-
թեան ժամանակ Կիրիտը չմոռնայ :
Այս ուղերձին մէջ օրինակն Աթէնքի
լրագրերն ունեն : Եւ իւր
կուած է : Հելլենաց հասարակային
կարծիքը կառավարութիւնը կատարե-
որպէս զի Յունական համարուած դա-
ւառները պահանջէ թուրքիայէն : Հել-
լենական կառավարութիւնն Օսման-
եան սահմանադրութիւնը գումարուած
զօրաց թիւը կաւելցնէ և իւր պատե-
րազմական պատրաստութիւնները կը
փութայնէ : Յունաստան բնակող թե-
սաղացի կամաւորք թեսաղից ապս-
տամբաց հետ միացած են, որք Հել-
լենական դրօշի ներքեւ կը կուտին :
Թեսաղից մէջ մէկ երկու տեղեր Իս-
լամաց և քրիստոնէից մէջ կռիւ ծա-
ղեր է : Այս լուրերն Հելլենական
աղբիւրէ ըլլալով ստուգութիւննին
կասկածելի է : Մինչև հիմայ Հելլե-
նական շարժումն սպառնական կեր-
պարանք մ'առնել հեռի է, և ոչ մէ-
կը քաջալերէ զայն, բայց քանի մը
Ռուսական դադանի դործակատարնե-
րէ, որք Աթէնքի խառնամուժը կը
զրգուէին : Օսմանեան լրագրերը ծա-
նային թէ Աթէնքի մէջ խառնամու-
նախորդ նախարարաց տունները քար-
կոծեր և պատու հաններուն ապակի-
ները խորտակեր են : Բայց այս լուրն
ուրիշ աղբիւրներէ ալ չձանուցուե-
լով կարելի է որ չափազանցութիւն
ըլլայ :

Գաղղիական Բուէս լրագիրը կըսէ
թէ Օսմանեան կայսրութեան բաղդը
Կէշիպօլուի և Չէքմէճէի առջև տըր-
ւելիք վերջին ճակատամարտերով
պիտի որոշուի, բայց Չէքմէճէի դիրքը
նկարագրելով կը հաստատէ թէ 40-50
հազար զօրք բաւական են զայն հը-
զօրեղապէս պաշտպանելու Ռուսաց
բոլոր զօրութիւններուն դէմ, և կա-
ւելցնէ թէ Անգլիայի բաղդադէսը

Գաղղիական Բուէս լրագիրը կըսէ
թէ Օսմանեան կայսրութեան բաղդը
Կէշիպօլուի և Չէքմէճէի առջև տըր-
ւելիք վերջին ճակատամարտերով
պիտի որոշուի, բայց Չէքմէճէի դիրքը
նկարագրելով կը հաստատէ թէ 40-50
հազար զօրք բաւական են զայն հը-
զօրեղապէս պաշտպանելու Ռուսաց
բոլոր զօրութիւններուն դէմ, և կա-
ւելցնէ թէ Անգլիայի բաղդադէսը

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գալով լրագրաց ճանաչու-
ած արքը խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ ար և իջէ գրութիւն խորագրի
— Տօրք նին պիտի ուղարկուի, Կալա-
թիա Պատրիարքար — Ճատաէօի իւր
198 : Եօրթ իսան, Մատիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չգնաւորած նա-
մակ չենդ ունեւիր :

այն դիրքը քննելով կը հաստատեն
թէ Կ. Պոլիս քաղաքը ցամաքէն Չէք-
մէճէի բնականայէս ամուր դիրքով
և ծովէն ալ նաւատորմով պաշա-
պանեալ անառիկ է : Հետեւաբար Կ.
Պոլիս քաղաքը կրնայ ամենագորեղ
դիմադրութիւն մ'ընել Ռուսաց, ա-
ռանց անոնց յարձակումներէն վը-
նասուելու :

Վերջին թղթաբերով եկած Եւրո-
պական լրագրաց մէջ հետեւեալները
կը կարգանք :

Լոնտոն 24 յունիս
Կ. Պոլսէն Տէյլի Թէլեգրաֆի լը-
րագրոյն ուղղեալ հեռագիր մը կը
ծանուցանէ թէ Ռուսիոյ և Բ. Դըրան
մէջ բանակցութիւններն սկսած են :
Թուրք պատուիրակներն հրահանգ-
ստացած են առաջարկել Ռուսիոյ որ
Պաթում աղատ նաւահանգիստ մ'ըլ-
լայ, Ասիոյ սահմանադրութիւն վրայ Պա-
թումէն մինչև Կարս Ռուսաց սահմա-
նակից երկիրը Ռուսիոյ արուի, և
Կարսի ու Կարնոյ բերդերը քան-

Ասիէց զատ հրահանգ ստացած
են հետեւեալ ծրագիրն առաջարկել
Եւրոպական դեսպանախորհրդի մը
որոշման : Պաթանները Պուլլարիոյ
հարաւային սահման նկատուին, Ռու-
մանիոյ անկախութիւնը ճանչուի,
Գարդանիլի ներդուցն ամեն տէրու-
թեանց պատերազմիկ նաւերուն բաց
ըլլայ և Սերվիլ ու Գարատապի խնդ-
րոց կարգադրութիւնն ետքի մնայ :
Նոյն հեռագիրը կաւելցնէ թէ դժ-
ուարութիւնը ծագեր են : Կը հա-
ւատեն թէ Ռուսիա կը պահանջէ որ
Ալեքիանուպօլիս Պուլլարիոյ մասն
նկատուի, Պաթումի նաւահանգիստն
իրեն տրուի և վերջապէս Գարդանե-
լի ներդուցը միմիայն Ռուսիոյ պատե-
րազմիկ նաւերուն բացուի :

Աթէնք 20 յունիս
Հասարակաց կարծիքը կը ջանայ
հարկադրել կառավարութիւնն, որ-
պէս զի Յունաստանի միապետութեան
իբր մասն ըլլալու սահմանեալ երկիր-
ներն աղբու կերպիւ պահանջէ թուր-
քիայէն : Կառավարութիւնը թուրքի-
ոյ սահմանադրութիւն հաւաքած զօ-
րաց թիւը կաւելցնէ և իւր պատե-
րազմական պատրաստութիւնները կը
փութայնէ : Թեսաղից մէջ ծագած
ապստամբութիւնը կը ծաւալի : Յու-
նաստանի մէջ բնակող թեսաղացի
կամաւորք ապստամբաց զօրութիւնը
կ'ստաւորացնեն, որք հելլենական
դրօշակներու ներքեւ կը պատերազ-
մին : Քրիստոնէից և թուրքաց միջև
կռիւ ծագեցաւ Միտախիթայի և
Քասթօրիայի մէջ :

Վիէնայի Բրէս լրագիրը Չէքմէ-
ճէէն հեռագիր մ'ստացած է ծա-
նուցանող թէ Գարատապի իշխան

պաշտօնատարաց զիւրափոխութիւնը , երկրորդն է՝ ամբաստանեալ պաշտօնատարաց վրայ տեղեկութիւն ուղեւոր պաշտօնատար և անտեղի դրութիւնն՝ որ երբեք չկրնար արդիւնք մ'արտադրել : Երրորդն է՝ պաշտօնատեղիներն ու շնորհուրդը (կիթիմա) :

« Այս ձախորդութիւնը խիստ վնասակար արդիւնքներ ունեցաւ Ասիոյ մէջ և ներկայ վիճակն յառաջ բերաւ : Այս ատեն երբեք չես տեսնիր ինչպէս ինքնաշարժ զինուորական զգեստներ լի ամբողջ միջերանցներ , անհաստատարի պաշտօնատարներու , կարգ մ'իսլամ երեւելիներու (վիճուէ) և անպատիւ չորայմաճիկներու հսկողութեան յանձնուելով , վստահեցան , գողցուեցան կամ թշնամեցան ձեռքը թողուեցան : Այս հաւատարմէք երբեք չես տեսնիր 10000 զորք արծաթ ընտիր ձիեր ու ջորիներ , որք Միջագետքէն Կարին զրկուած էին յոգնութիւն պատերազմին , Կարնոյ փողոցներուն մէջ 30-60 զրկի վաճառուեցան կառավարութեան ստորին պաշտօնէից ձեռք : Այս հաւատարմէք երբեք չես տեսնիր ինչպէս հեռուոր տեղերէ Կարին արմաթք փոխադրող զիւզապէք , 20-30 օր ճանապարհ քայլէէ ետեւ , 50-40 օր ալ Կարնոյ փողոցներուն մէջ թափառելու հարկադրեցան , որպէս զի կարող ըլլան պաշտօնատարաց ձեռքէն անդորրադիր մ'ըստանալու թէ սայլով բերած արմաթքներն յանձնեցին :

« Երկրորդ կըլլայ մի առ մի թուել այդ անխորժ պաշտօնատարաց ձեռքէն երկրին համար վնասները : Բայց այսօր խնդիրն ասոր վրայ չէ : Ուստի կը վերադառնամ իմ առաջարկին , որ է տեղեկութիւն խնդրեալ (կիթիմա) դրութեան ջնջումն , և կը խնդրեմ որ Պետութեան միւլթիսարքի զաղրի իւր պաշտօնէին և պատաստանի երկարիւն : (Մտախաբութիւնք) :

Ժողովին անդամներէն ունեցող ստիպողաբար խնդրեցին որ պաշտօնատարաց պարտականութիւններն ու իրաւասութիւնները կանոնաւորուի օրինաց ծրարի մը պահանջով : Կառավարութիւնէն :

Պետական խորհրդոյ անդամ Իքիսաթէս Էֆենտիյի յայտարարեց թէ յիշեալ օրէնքը խորագրուելու վրայ է , և բիւ օրէն ժողովին պիտի ներկայանայ :

Միտիլիի երեսփոխան Իսանտիլվիյի Էֆենտիյի և Իսիլի երեսփոխան Մինա Էֆենտիյի Անքիլաքէն եկած տեղեկագրեր ներկայեցին , որոց մէջ Պետական մատակարար Սիւրթուրու անուն զիւզի մը Յոյն բնակչաց վրայ գործուած բարբարոսական անգլութեանց արեւելուոր նկարագիրը կը տեսնուէր :

Պետական մէջ և շրջակայները տիրած սարսափելի օրերուն մէջ , Պետական Գալմուսի խումբ մ'ապրանիացի անկանոն զօրք զրկել է յիշեալ զիւզը պահպանելու : Ապրանիացիք , որոց հրամանատարն էր Նուրի ապա անուն ապրանիացի մը , 2000 լիրա փրկանք կը պահանջէին զիւզին բնակիչներէն : Զիւզացիք այսչափ դուռնոր մը վճարելու անկարող , Պետական զայմադարան մարդ զրկելով կը ծանուցանեն այս իրողութիւնը : Ապրանիացիք կը կատարեն , սուրբով ու հրացաններով զիւզացիք վրայ կիլիսան և կ'ըսեն կըսին ջարդել : Խեղճ զիւզացիք երեւելի կը փախան , բայց ապրանիացիք երեք օր կը պաշարեն դանոնը և անդադար կը ընեն կը տեղան անոնց վրայ , այնպէս որ 800 հոգիէն հազիւ 200ը մնացան : Երբ ծեղով Անքիլաքէն կը փախան . իսկ մնացեալ 600 հոգիէն արք կանայք և մանկուք՝ զոհ կերթան այդ հրէշներուն խոզիմութեան , որք միտնողանայն կանանց պատիւ բռնաբարելու և մինչև իսկ 10 տարեկան աղջկանց չեն խնայել :

Ժողովը մեծ արտայայտութեամբ լսեց այս քառամեկի նկարագիրն և ստիպողական միջոցներ քուէտրեց :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍՏԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
18 յունի . չորեքշաբթի իրիկուն	9.32
19 յունի . հինգշաբթի առաւօտ	
Բացուեցաւ	9.38
Ժամ 6 ին	10.
Բուսիլի երկաթուղի	Ֆր. 30
Թղիսաղում	Ղր. 294
ԸՆԹԱՅԻՐ ԱՐԺԵԹՂՈՅ	
Կ. Պոլս 18 յունիս	
Ստիլեթ Ժէնէրալի բաժն . Անգլ. լի.	3. 8
• Գիտականութեան	2.10
Կ. Պոլս Պաշտօնային	3.12
Քրէտի Ժէնէրալ	2.20
Քրէտի Օսթրո-Թիւրք	—
Փոլս . 1863	Ֆր. 46
• 1865	47
• 1869	42
• 1872	15 1/2
• 1873	40
Թրամուայ	Օսթ. լի. 0 85

ՕՍՄԱՆԷՆ ԵՐԵՍԹՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՂ

« Պետութեան մ'իւր նիւթական զօրութեան կարողութեան մասերը զօրութեան լցնելու է : »

Դարուս սկիզբը Բրուսիոյ վերջին ծայր թշուառութեան հասած էր : Իր երկիրներուն մեծ մասը գրաւուած էր , մնացած մասը ֆրանսիական զօրաց աւարաւորութեանը մատնուած : Երկրորդութեանը , ձեռնակերտութիւնը , վաճառականութիւնը ճգնաժամի և ժողովրդէն աղքատութեան մէջ էր : Ասկէ զատ Բրուսիոյ իր այդ թշուառ վիճակին մէջ ստիպուած էր 120 միլիոն ֆրանք պատերազմական տուգանք վճարել ֆրանսայի : Սակայն ո՛չ տարբան և ո՛չ Բրուսիոյ փոփոխութիւնը չէին ու վճարուեցան . արտաքին նիւթական զօրութեան կորուստն սրտնեղին փոխարինելու աւելի հաստատուն զօրութեամբ , այն է ժողովրդէն և պետութեան ներքին պիտիւր զարգացնելով :

Եւր 1809 ին Պէրլինի համալսարանը հիմնուեալ ծրագիրը ներկայեցին , Վիլհելմ Գ. մեծ հաճութեամբ ընդունեց և ըստ . « Շատ լաւ է , այս , պետութիւն մը իւր նիւթական զօրութեան կորուստը մտաւոր զօրութեամբ լցնելու է : »

Բաղդատենք Բրուսիոյ այսօրուան վիճակն իր թշուառ մերձաւոր անցիլիյի հետ , և անմիջապէս կը հասկնանք թէ ո՛ր աստիճան հեռաւոր և արդիւնաւոր է եղեր Վիլհելմի և իր խորհրդականաց քաղաքականութիւնը : Այսօր Բրուսիոյ իր զօրութեամբ ու լուսաւորութեամբ քաղաքակիրթ ազգաց գլուխն անցած է : Ասկէ տասնէ հինգ տարի առաջ « Հիւսիսային Մեզու » անուն Ռուս լրագիրն Եւրոպական ազգաց լուսաւորութեան վիճակագրութիւնը հրատարակած էր , որուն մէջ Բրուսիոյ առաջին տեղը կը բռնէր : Բրուսիոյ մէջ 6 մարդու մէկ աշակերտ կիլիսոր , մինչդեռ Ռուսիոյ մէջ 133 հոգւոյ մէկ աշակերտ , Լեհաստանի մէջ 38 հոգւոյ , Աւստրիոյ մէջ 14 հոգւոյ , Ֆրանսայի մէջ 11 հոգւոյ , և Անգլիոյ մէջ 9 հոգւոյ մէկ աշակերտ : « Ուրեմն , կըսէր ուրիշ Ռուս թերթ մը , Լեհաստանը մեզնէ (Ռուսացմէ) երկու անգամ աւելի քաղաքակիրթ են , Աւստրիացիք ինն անգամ , Ֆրանսիացիները տասներկու անգամ , Անգլիացիները տասնէ հինգ անգամ , իսկ Բրուսիացիներն ու Գերմանացիները քսան անգամ : » Զեռքերն ին Օսթ. պետութեան լուսաւորութեան վիճակագրութիւնը չունենալով՝ չենք կրնա ճիշդ գիտնալ թէ մենք Գերմանացիք մեզնի անգամ նուազ քաղաքակիրթ ենք . բայց հայտնաբերութեանը , որ ընդհանրապէս ամեն ազգաց ալ յառաջադիմութեանը մեծ ապէս արդիւնք կըլլայ , մէկգիլ գնելով՝ կրնանք ըսել թէ Օսթ. մանեան պետութեան ժողովրդաց քաղաքակիրթութեան աստիճանը համեմատաբար գուցէ Ռուսացմէ ալ վար ըլլայ : Ռուսք այսօր 6-7 համալսարան , շատ մը բարձրագոյն և երկրորդական վարժարաններ , ինչպէս և նախակիրթական դպրոցներ ունին : Ռուսաց լուսաւորութեան միջոցներն ո՛չ միայն թուով աւելի են մերիններէն , այլ և որակաւթեամբ մերիններէն գերազանց են :

Եւ ընտանիք է որ այդ պէս ըլլայ . շատ տարիներէ ՚ի վեր Ռուսք անգլու անգլաբար Գերմանիոյ լուսաւորութեան միջոցները կը հետադրուեն , կառուցանուին և մէկ կողմէն տեղաւորուին Գերմանացիներէն , ինչպէս որ երեսփոխան զիւզապէք և իր խորհրդականները ընդունելու էին : Ռուսք լուսաւորութեան միջոցներն ո՛չ միայն թուով աւելի են մերիններէն , այլ և որակաւթեամբ մերիններէն գերազանց են :

Եւ ընտանիք է որ այդ պէս ըլլայ . շատ տարիներէ ՚ի վեր Ռուսք անգլու անգլաբար Գերմանիոյ լուսաւորութեան միջոցները կը հետադրուեն , կառուցանուին և մէկ կողմէն տեղաւորուին Գերմանացիներէն , ինչպէս որ երեսփոխան

* Միայն Պէրլինի մէջ 550 ի չափ զանազան կարգի վարժարանք կան :

ըութեան պաշտօնեայք , միւս կողմէն մասնաւոր անձինք ամեն տարի Գերմանիա կերթան , (ինչպէս նաեւ Չախցերիա , Ֆրանսա , Անգլիա և Ամերիկա) կը սեփականեն իրենց ինչ որ կարեւոր է և օգտակար , կը վերադառնան հայրենիք և իրենց ազգային հաստատութիւնները կը բարեկարգեն ու կը ճոխացնեն : Ռուսաց գրականութիւնն ալ մեծ ապէս կը նպաստէ և կրնի յառաջադիմութեանը . ուր որ երեւելի դուրմ մը գտնայ , անմիջապէս կը թարգմանէ զայն կամ անոր բովանդակութիւնը ժողովրդէն մէջ տարածելու կը ջանայ պարզ և հասկանալի լեզուաւ : Բաղմաթիւ լրագիրներ և հանգէսներ ժողովրդէն մտաւոր զարգացմանը կաշխատին : Զափաղանցութիւն ըրած չենք ըլլար , եթէ ըսենք թէ Ռուսք իրենց վիճակին լաւ կողմերը գիտաբար պէս Գերմանացիք կը պարտին :

Յիշուել Սլավոնէր կամ ֆանալալիսթ կոչուած զօրաւոր մաս մը կայ , որ իր ինքնահաւան տգիտութեամբն ու կոյր հայրենասիրութեամբը կը յոխորտայ , արեւմտեան ազգաց քաղաքակիրթութիւնը կտտէ կարհամարէ , Սլավոնցը մարդկային ազգին վերանորոգիչը կը նկատեն , և վերանորոգչութիւն ըսելով բարբարոսական տիրապետութիւն կը հասկնայ , բայց Ռուս ժողովրդէն բուն լուսաւորեալ մասն , որ օրէ օր կը բազմանայ ու կը զարգանայ , ամեն ջանք ի դուրմ կը գնէ ժողովրդին հակացնելու թէ ան ազգի մը յառաջադիմութեան ու հաստատուն բարօրութեան պայմանն արտաքին զօրութիւնն ու աշխարհակալութիւնը չէ , այլ ազգին ներքին ոյժերուն զարգացումը , լուսաւորութեան տարածումն է : Մէկ խօսքով , Ռուսաց լուսաւորեալ մասն ալ իր երկրին բարօրութիւնն ու յառաջադիմութիւնը հան կը փնտռէ ուր փնտրած և գտած է արդէն Բրուսիոյ :

Ամեն յետադիմաց ազգաց կառավարութեան և լուսաւորեալ մասին պարտքն է նոյն ճանապարհը բռնել , Յետադիմաց ազգ մը մէկ կողմէն յառաջադիմ ազգաց քաղաքակիրթութեան օգուտ քայրելու , միւս կողմէն իրեն նման յետադիմաց և մոնախագ դրացի ազգաց քաղաքակիրթութեան համար բռնած ընթացքը միշտ սրտաւառ աչքով գիտելու է . յետադիմաց ազգ մը որչափ հաստատամտութեամբ և յարատեւութեամբ հետեւի այս երկու սկզբունքին , այնչափ աւելի կը զիւրանայ և կարողութեան իր յառաջադիմութեան դուրմը , Ամեն լուսաւորեալ մարդ , մոնախագ կառավարութեան բարձր պաշտօնեայք և երեսփոխանք , երբեք մտնալու չեն այս երկու հիմնական սկզբունքը , եթէ իրօք փափաքող են իրենց հայրենեայ բարօրութեանըն ու յառաջադիմութեանը : ճշմարտաւ հայրենասիրները չեն ծածկեր իրենց երկրին պակասութիւնները , կամ մտադրածին կատարելութիւններով չեն շղանար և ուրիշներ ըն ալ շղանալու չեն ճգնիր , այլ անկեղծութեամբ և արիւնքութեամբ կը ընեն և երկան կը հանեն իրենց երկրին պակասութիւններն և անյոյժող կամքով ու անխնայ յարստեւորութեամբ զարման կը տանին տնոնց՝ իրենց դուրմութեան հիմք բռնելով յիշեալ երկու քաղաքական սկզբունքը : Սլաւոն մասին Օսթ. մանեան երեսփոխանական ժողովը մեծ պաշտօն ունի կատարելիք : Այդ պատկառելի ժողովը պէտք չէ ամեն բան կառավարութեան պաշտօնեաներէն պահանջէ , ինչպէս որ երեսփոխան

Էֆենտիյիներէն ոմանք կը կարծեն : Միթէ երկրին բարօրութեանն ու յառաջադիմութեանը վերաբերեալ ամեն միջոց միայն կառավարութեան պաշտօնեայք պիտի խորհին , միթէ երեսփոխանական ժողովն ինքն ալ օրինաց ծրագիրներ առաջարկելու պարտք կամ իրաւունք չունի : Ինչո՞ւ ուրեմն երեսփոխան Էֆենտիյք այդ ծրագիրները միայն Պետական խորհրդէն կը պահանջեն և կը կարծեն որ իրենց պաշտօնը վարչութեան պատրաստած օրէնքները վաւերացնել է միայն :

Եւր ինքիւրն ընդհանուր երկրին բարօրութեանն ու յառաջադիմութեանը կը վերաբերի ո՛չ միայն վարչութեան պաշտօնէից և խորհրդաց , այլ և երեսփոխան և ոչ իսկ երեսփոխանական ժողովոյ ոյժերը կը բաւեն զոյն ըստ արժանւոյն լուծելու , և կարեւոր կը դատուի երկրին բոլոր խորհրդ անհատից հրապարակային ընտելութեանն ու լուսաւորութեանն ենթակիլ զայն * : Այսպէս կըլլայ մինչև անգամ քաղաքակիրթ ազգաց մէջ , ուր թէ՛ վարչական պաշտօնեայք և թէ՛ երեսփոխանք աւելի ձեռնհասութեան և հմտութեան ունին : Օսթ. մանեան երեսփոխաններէն ոմանք այս ընտելացութեան սկզբունքին դէմ կերպան : Նախընթաց նիտերէն մէկուն մէջ երեսփոխան Էֆենտիյիներէն ոմանք՝ ի պատասխան իր գիտողութեան՝ յայտարարած են թէ ընդհ. ժողովն իր պաշտօնը լաւ կը ճանչնայ և թէ տեղութեան պաշտօնեայք այդ մասին իրեն խրատ տալու իրաւունք չունին : Սիրելի է մեզ հաւատալ թէ պատկառելի ժողովն մեծամասնութիւնն այդ կարծիքէն չէ , և գիտէ թէ ո՛չ միայն վարչականութեան պաշտօնեայք , այլ որ և է մասնաւոր անհատ անգամ իրաւունք ունի ընդհ. ժողովոյ ընթացքին վրայ դիտողութիւններ ընելու . զի աւելորդ է կարծենք ըսելը , ո՛չ երեսփոխանք ուրոյն ուրոյն և ո՛չ իրենց ամբողջութեամբ կրնան մարդկային թերութիւններէն զերմ ենթադրուիլ : Երեսփոխանաց անբռնաբարի իրաւունքն ու անդիմադրելի զօրութիւնն իրենց հաւաքական քուէին մէջն է , որուն հնազանդ իլ պարտական է ամեն նոյն օր իրեւ օրինաւորութեան : Եթէ այդ օրինաւորութեանը ճշմարտութեան և արդարութեան դէմ ըլլայ , կրնանք բողոքել անոր դէմ , կրնանք ընդադատել զայն , բայց հրապարակելու ենք անոր : Օրինակով մը բացատրենք :

Միջոցեւ յաջորդ Բուսի

Վ. Բ. Պ. Ա. Կ. Նախընթաց թերթով հրատարակուած ֆրանսալեզու յօդուածին ծանօթութեան մէջ սխալմամբ Յ. Կապուտիկեան եպիսկոպոս և Մ. Ա. Կապուտիկեան նշանակուած են , մինչդեռ Արիստակէս եպիսկոպոս , Սարգիս Աղաբէգեան և Գրիգոր Մարկոսեան պիտի ըլլան :

* Խօսքերնիս այնպիսի քաղաքական և դիւանագիտական խնդրոց չլիբարերի , որք երբեմն ժամանակաւոր զաղտնութիւն կը պահանջեն : Զերմ հաւատ կը տածենք թէ պիտի գայ օր մը՝ երբ տեղութեանց փոխադարձ յարաբերութիւններուն հիմնականը թիւն համարութիւն և արդարութիւն պիտի ըլլայ , դիւանագիտութիւնը ազգաց էթնա շահերուն պիտի ծառայէ և ոչ թէ մասնաւորաց շահերու և անապառական կրկն , — այն օրը զիւսանալիական խնդրք անգամ զաղտնութեան պէտք չպիտի ունենան :
